ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՓԱԹԵԹ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲԱՑՕԹՅԱ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ / ՀՐԱՎԵՐ

Պատվիրատու: «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ն, ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Երիտասարդների ներգրավումը տեղական ինքնակառավարման գործում Հայաստանում» ծրագրի շրջանակում, հրավիրում է իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացնելու գնային առաջարկներ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում բացօթյա հանգստի գոտու հիմնման աշխատանքների իրականացման համար։

Վայրը: ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի փող., 128 շենք, Ճամբարակի Ավագ դպրոցի բակ։
Աշխատանքների իրականացման ժամկետներ: 27.04.2026թ.մինչև 27.05.2026թ.։

Գնային առաջարկի ներկայացման կարգ և ժամկետ: Գնային առաջարկները պետք է ուղարկել Կազմակերպության էլ.փոստի՝ armsakhfd@gmail.com հասցեին, մինչև 2026թ. ապրիլի 21-ը ներառյալ։

Գնային առաջարկների գնահատման և ընտրության ժամկետ։ 2026թ. ապրիլի 22։

Ընտրված մասնակցին ծանուցելու ժամկետ: 2026թ. ապրիլի 23։

Պայմանագրի կնքման ժամկետ: 2026թ. ապրիլի 27։

2. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն կցված նախագծի. աշխատանքները ներառում են՝

- խրամուղու քանդում և մշակում,
- հիմքի իրականացում բետոնով եզրաքարերի տակ, եզրաքարերի տեղադրում,
- էլեկտրական լուսատուի մետաղական հենասյան պատրաստում, ներկում, տեղադրում բետոնի հիմքով և LED ֆոտովոլտային պանելի համակարգով լուսատով կահավորում
- քայլուղիների համար խեճով և ավազով հիմնահատակի իրականացում,
- քայլուղիների հատակի սալիկապատում բազալտե սալիկներով,
- մետաղական ճաղավանդակների պատրաստում, ներկում և տեղադրում բետոնե հիմքով,
- փայտե նստատեղերով մետաղական 4 նստարանների պատրաստում, ներկում, տեղադրում և ամրացում,
- փայտով պատված մետաղական 4 աղբամանների պատրաստում, ներկում և տեղադրում,
- գոյություն ունեցող հենասյուների վրա մետաղական ցանցով ցանկապատում և ներկում։

3. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Մասնակիցը պետք է՝

- ունենա շինարարական/մետաղական/բարեկարգման աշխատանքների փորձ,
- ունենա անհրաժեշտ մարդկային և տեխնիկական ռեսուրսներ,
- համաձայն լինի աշխատանքներն իրականացնել սահմանված ժամկետում,
- չունենա ժամկետանց հարկային կամ դատական խոչընդոտներ,
- չլինի ՄԱԿ-ի, ԵՄ և ԵԱՏՄ պետությունների սահմանափակումների ցանկում,
- ներկայացնել ստորագրված և կնքված գնային առաջարկ։

4. ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՁԵՎԱՉԱՓ

Մասնակցի անվանում / ԱՁ անուն ազգանուն / Ընկերության ամբողջական անվանում՝ առանց հապավումների։
ՀՎՀՀ։
Հասցե։
Հեռախոս։
Էլ. փոստ։

5. ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

№	Աշխատանքի անվանում	Գին (ՀՀ դրամ)
1	Բացօթյա հանգստի գոտու հիմնման ամբողջական աշխատանքներ	
	ԱԱՀ (եթե կիրառելի է)	
	Ընդհանուր արժեք (թվերով և բառերով)	

Աշխատանքների կատարման ժամկետ: _____ օր
Երաշխիքային ժամկետ: _____ ամիս
Առաջարկի վավերականություն: առնվազն 15 օր

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ պահանջներին և համաձայն եմ դրանք կատարել:

Անուն, ազգանուն _____

Ստորագրություն _____

Ամսաթիվ _____

6. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Գնային առաջարկին կից ներկայացնել՝

1. Լրացված (ստորագրված և կնքված) գնային առաջարկը:
2. Գրանցման վկայականի պատճեն (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձի համար՝ նույնականացման քարտ կամ անձնագիր:
3. Նմանատիպ աշխատանքների փորձը հիմնավորող տեղեկատվություն (եթե կա):
4. Կոնտակտային տվյալներ՝ գործունեության հասցե, հեռախոս (քաղաքային կամ բջջային), էլեկտրոնային փոստի հասցե, կայքի հասցե (առկայության դեպքում):

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Առաջարկները կգնահատվեն հետևյալ չափանիշներով՝

- համապատասխանություն հայտարարության պահանջներին,
- առաջարկվող գին,
- կատարման ժամկետ,
- փորձ և կարողություններ,
- երաշխիքային պայմաններ:

Պատվիրատուն պարտավոր չէ ընտրել միայն ամենացածր գինը ներկայացրած մասնակցին, եթե այլ առաջարկն ավելի շահավետ է ընդհանուր գնահատմամբ:

8. ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Հարցերի ներկայացման վերջնաժամկետ. Սույն հայտարարությունից հետո 2 օր:
Գնային առաջարկների ներկայացման վերջնաժամկետ. Սույն հայտարարությունից հետո 7-րդ օրը, ժամը 12:00:
Գնահատման արդյունքների ծանուցում. Մինչև 5 աշխատանքային օր:
Պայմանագրի կնքում. Ընտրված մասնակցի հետ բանակցություններ և լրացուցիչ համաձայնեցման փուլից հետո 2 օր:

Գնային առաջարկներն ուղարկել: armsakhfd@gmail.com էլեկտրոնային հասցեին կամ ներկայացնել կազմակերպության գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, 0009, Իսահակյան փողոց 28, շենք 3, ցանկության դեպքում, բայց նույն ժամկետում:

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Պատվիրատուն կարող է պահանջել պարզաբանումներ:

- Պատվիրատուն կարող է մերժել թերի կամ ժամկետանց հայտերը։
- Պատվիրատուն կարող է չեղարկել հարցումը՝ Պատվիրատուի դոնոր կազմակերպության պահանջի դեպքում՝ առանց պայմանագիր կնքելու պարտավորության։
- Վճարումը կատարվում է պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում՝ ընդունման ակտի հիման վրա։
- Աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների պահպանումը պարտադիր է։

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 27 ապրիլի 2026թ.

Մի կողմից՝ **«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ն** (այսուհետ՝ Կազմակերպություն) և ՄԱԿ-ի Ժողովրդավարության Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Երիտասարդների ներգրավումը տեղական ինքնակառավարման գործում Հայաստանում» UDF-23-988-ARM ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ղեկավար **Մերի Խաչատրյանի**, որը գործում է Կազմակերպության կանոնադրության և Ծրագրի հիման վրա, այսուհետ՝ **Պատվիրատու**, և մյուս կողմից՝ _____, ի դեմս _____, որը գործում է ընկերության կամ կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է իրականացնել Ճամբարակ համայնքում բացօթյա հանգստի գոտու հիմնման աշխատանքներ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել և վճարել կատարված աշխատանքների համար։

1.2. Աշխատանքների ծավալը։

1.3. Աշխատանքները ներառում են գնանշման հարցման փաթեթով և Կատարողի առաջարկով նախատեսված բոլոր աշխատանքները։

1.4. Աշխատանքները կատարվում են ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի փողոց 128 շենք, Ճամբարակի Ավագ դպրոցի բակ հասցեում։

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ հարկերը։

2.2. Վճարումը կատարվում է անկանխիկ՝ բանկային փոխանցմամբ։

2.3. Վերջնական վճարումը կատարվում է աշխատանքների ընդունումից հետո՝ համապատասխան հանձնման-ընդունման ակտի հիման վրա։

3. Կատարման ժամկետը

3.1. Աշխատանքների մեկնարկը՝ պայմանագրի ստորագրման օրվանից։

3.2. Աշխատանքների ավարտը՝ ոչ ուշ, քան «------» _____ 2026թ.

3.3. **Կողմերի իրավունքներն ու պարտականությունները.**

3.3.1. **Կատարողը պարտավոր է՝**

- աշխատանքները կատարել որակով և սահմանված ժամկետում,
- օգտագործել անվտանգ և համապատասխան նյութեր,
- պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը հանձնել մաքուր վիճակում։

3.3.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

- տրամադրել հասանելիություն տարածքին,
- սահմանված կարգով ընդունել կատարված աշխատանքները,
- կատարել վճարումները պայմանագրով նախատեսված ժամկետում։

3.4. **Կատարողն իրավունք ունի՝**

- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և հասանելիություն աշխատանքների իրականացման համար,
- ստանալ վճարում կատարված և ընդունված աշխատանքների դիմաց,
- պահանջել ժամկետների վերանայում՝ հիմնավորված և Պատվիրատուի հետ համաձայնեցված դեպքերում,
- ներկայացնել առաջարկություններ տեխնիկական լուծումների բարելավման վերաբերյալ,
- մասնակցել հանձնման-ընդունման գործընթացին և ներկայացնել իր դիտարկումները:

3.5. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

- վերահսկել աշխատանքների կատարման ընթացքը և որակը,
- պահանջել թերությունների վերացում ողջամիտ ժամկետում,
- ստուգել օգտագործվող նյութերի համապատասխանությունը,
- մերժել ոչ որակյալ կամ տեխնիկական պահանջներին չհամապատասխանող աշխատանքների ընդունումը,
- պահանջել լրացուցիչ պարզաբանումներ Կատարողից աշխատանքների վերաբերյալ,
- միակողմանի լուծել պայմանագիրը Կատարողի էական խախտումների դեպքում՝ օրենքով և պայմանագրով սահմանված կարգով:

4. Աշխատանքների ընդունում

4.1. Աշխատանքների ավարտից հետո կազմվում է հանձնման-ընդունման ակտ:

4.2. Թերությունների առկայության դեպքում Կատարողը պարտավորվում է վերացնել դրանք ողջամիտ ժամկետում:

5. Երաշխիքային պարտավորություններ

5.1. Կատարողը տրամադրում է ------ ամիս երաշխիքային ժամկետ:

5.2. Երաշխիքային ժամկետում ի հայտ եկած իր մեղքով թերությունները վերացվում են իր միջոցներով:

6. Պատասխանատվություն

6.1. Ժամկետների խախտման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

6.2. Վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ դատական կարգով:

7. Անհաղթահարելի ուժ (Ֆորս-մաժոր)

7.1. Անհաղթահարելի ուժի հանգամանքների դեպքում կողմերն ազատվում են պարտավորությունների չկատարման պատասխանատվությունից՝ դրանց գոյության ընթացքում:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:

8.2. Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու հավասարազոր օրինակով՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

9. Կողմերի տվյալներ ու ստորագրություններ

Պատվիրատու՝	**Կատարող՝**
«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ, ՀՎՀՀ 02513655	Լրացնել նույն ձևով ինչ լրացված է Պատվիրատուի համար

ՀՀ, ք.Երևան, 0009, Իսահակյան 28 փող., շենք 3, armsakhfd@gmail.com «Ամերիաբանկ» ՓԲԸ հ/հ Տնօրեն՝ Մերի Խաչատրյան ---------- կ.տ.	

TOR / ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ընդհանուր տեղեկություն

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ն, ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Երիտասարդների ներգրավումը տեղական ինքնակառավարման գործում Հայաստանում» ծրագրի շրջանակում, նախատեսում է հիմնել բացօթյա հանգստի գոտի ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում՝ Ճամբարակի Ավագ դպրոցի բակային տարածքում։

Նպատակ

Ստեղծել անվտանգ, բարեկարգ և ժամանակակից բացօթյա տարածք աշակերտների, երիտասարդների և համայնքի բնակիչների հանգստի, շփման և փոքր միջոցառումների կազմակերպման համար։

Իրականացման վայրը

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի փող., 128 շենք, Ճամբարակի Ավագ դպրոցի բակ։

Աշխատանքների շրջանակ

Կատարողը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները՝

- խրամուղու քանդում և մշակում,
- հիմքի իրականացում բետոնով եզրաքարերի տակ, եզրաքարերի տեղադրում,
- էլեկտրական լուսատուի մետաղական հենասյան պատրաստում, ներկում, տեղադրում բետոնի հիմքով և LED ֆոտովոլտային պանելի համակարգով լուսատով կահավորում
- քայլուղիների համար խեճով և ավազով հիմնահատակի իրականացում,
- քայլուղիների հատակի սալիկապատում բազալտե սալիկներով,
- մետաղական ճաղավանդակների պատրաստում, ներկում և տեղադրում բետոնե հիմքով,
- փայտե նստատեղերով մետաղական 4 նստարանների պատրաստում, ներկում, տեղադրում և ամրացում,
- փայտով պատված մետաղական 4 աղբամանների պատրաստում, ներկում և տեղադրում,
- գոյություն ունեցող հենասյուների վրա մետաղական ցանցով ցանկապատում և ներկում։

Տեխնիկական պահանջներ

- Օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր, որակյալ և շահագործման համար պիտանի։
- Մետաղական կոնստրուկցիաները պետք է մշակված լինեն հակակոռոզիոն և ներկային շերտով։
- Տեղադրվող նստարաններն ու աղբամանները պետք է լինեն ամուր, գեղեցիկ և արտաքին պայմաններին դիմացկուն։
- Բոլոր աշխատանքները պետք է համապատասխանեն անվտանգության նորմերին։

Ժամկետներ

Աշխատանքների ընդհանուր տևողությունը՝ պայմանագրի ստորագրումից հետո համաձայնեցված ժամկետում, **բայց ոչ ուշ, քան 27 մայիսի 2026թ.։**

Ընդունման չափանիշներ

Աշխատանքները կհամարվեն ընդունված, եթե՝

- կատարվել են ամբողջ ծավալով,
- տեսանելի թերություններ չկան,
- տարածքը մաքուր է և շահագործման պատրաստ,
- ներկայացվել է հանձնման-ընդունման ակտ։

Երաշխիքային պայմաններ

- Կատարողը պարտավոր է տրամադրել առնվազն -------- ամիս երաշխիք կատարված աշխատանքների և տեղադրված տարրերի համար։

Անվտանգություն և շրջակա միջավայր

- Կատարողը պատասխանատու է աշխատողների անվտանգության համար։
- Աշխատանքների ընթացքում տարածքը պետք է պահվի անվտանգ վիճակում։
- Շինարարական աղբը պետք է հեռացվի սահմանված կարգով։

Հաշվետվություն և հաղորդակցություն

- Կատարողը պարտավոր է պատվիրատուին պարբերաբար տեղեկացնել աշխատանքների ընթացքի մասին և անհապաղ հաղորդել հնարավոր խոչընդոտների մասին։